ՊԵՏԱԿԱՆԳՈՒՅՔԻԿԱՌԱՎԱՐՄԱՆԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 62 -Ա «10» 02 2026թ. ք.Երևան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

10.02.2026

X

Signed by: AVETISYAN ARNAK 1701920336 **ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Հավելված

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի

2026 թվականի փետրվարի 10-ի № 62 - Ա հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման բաժնում (այսուհետ՝ Բաժին)՝ աշխատանքային ծավալի կտրուկ ավելացմամբ պայմանավորված՝ Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթների (*մասնավորապես՝ ուսումնասիրել պետական անշարժ գույքի անհատույց օգտագործման և վարձակալության տրամադրման համար ներկայացված փաստաթղթերը (առաջարկությունները և դիմումները), ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը և ներկայացել մասնագիտական դիրքորոշում, մշակել և ներկայացնել քննարկման պետական անշարժ գույքի տնօրինման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծեր, հավաքագրել անհատույց օգտագործման և վարձակալության տրամադրված պետական անշարժ գույքի և դրա օգտագործողների վերաբերյալ տեղեկատվությունը հաշվառման աշխատանքների ճշգրիտ իրականացման համար, նախապատրաստել գրություններ համապատասխան պետական կառավարման մարմիններից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար*) իրականացման նպատակով Կոմիտեի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման բաժնում նպատակահարմար է պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ իրավագիտության բնագավառներում երեք տարվա աշխատանքային ստաժ.

2) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (փոփոխություններով), ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Պետական գույքի վարձակալության տրամադրման, ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 9-

ի N 731, 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 914-Ն որոշման,իր լիազորությունների հետ կապված իրավական այլ իրավական ակտերի իմացություն.

3) ունենա տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է վեց ամիս ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետն վեց ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. պետական անշարժ գույքի անհատույց օգտագործման և վարձակալության տրամադրման համար ներկայացված փաստաթղթերի (առաջարկությունների և դիմումների) ուսումնասիրություն և մասնագիտական դիրքորոշման ներկայացում,

բ. ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկատվության և փաստաթղթերի ուսումնասիրում և քննարկում, պետական անշարժ գույքի տնօրինման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերի մշակում,

գ. հաշվառման աշխատանքների ճշգրիտ իրականացման համար անհատույց օգտագործման և վարձակալության տրամադրված պետական անշարժ գույքի և դրա օգտագործողների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

դ. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված հայտերի ու փաստաթղթերի ուսումնասիրում և դրանց հիման վրա պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքից մինչև մեկ տարի և մեկ տարուց ավելի ժամկետով վարձակալության տրամադրման աշխատանքների իրականացում,

ե. պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքից մինչև մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրված տարածքների հաշվառման աշխատանքների իրականացում,

զ. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և մասնագիտական դիրքորոշման ներկայացում,

է. Կոմիտեի գործառույթներին վերաբերող իրավական ակտերի մշակում:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է դրական կամ բացասական:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները

Փորձագետը աշխատանքներն ավարտելուց հետո (աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտից 5 աշխատանքային օր առաջ) ներկայացնում է հաշվետվություն:

6. Աշխատանքի գնահատման չափանիշներ

Աշխատանքը գնահատվում է ներկայացված հաշվետվության հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-ից «է» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջարդյունքների չափանիշներն են՝

ա. պետական անշարժ գույքի անհատույց օգտագործման և վարձակալության տրամադրման համար ներկայացված փաստաթղթերի (առաջարկությունների և դիմումների) ուսումնասիրված է և մասնագիտական դիրքորոշումը ներկայացված է,

բ. ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկատվությունն և փաստաթղթերն ուսումնասիրված են և պետական անշարժ գույքի տնօրինման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերը մշակված են,

գ. հաշվառման աշխատանքների ճշգրիտ իրականացման համար անհատույց օգտագործման և վարձակալության տրամադրված պետական անշարժ գույքի և դրա օգտագործողների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրված է,

դ. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված հայտերն ու փաստաթղթերն ուսումնասիրված են և դրանց հիման վրա պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքից մինչև մեկ տարի և մեկ տարուց ավելի ժամկետով վարձակալության տրամադրման աշխատանքներն իրականացված են,

ե. պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքից մինչև մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրված տարածքների հաշվառման աշխատանքներն իրականացված են,

զ. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերն ուսումնասիրված են և մասնագիտական դիրքորոշումը ներկայացված է,

է. Կոմիտեի գործառույթներին վերաբերող իրավական ակտերը մշակված են: